№ 91 Մայիսի 21 (Յունիսի 2) 1881 Մայիսի 21 (Յունիսի 2) № 91

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Շուշուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Թիւրքիա։ Բուլգարիա։ Անգլիա։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Աւստրօ-գերմանական պատերազմից առաջ Աւստրիան գրեթէ քայքայվող դրութեան մէջ էր երևում։ Երեք գլխաւոր տարրեր, որոնք կազմում են աւստրիական պետութիւնը, միմեանց մէջ թշնամական յարաբերութիւնների մէջ էին գտնվում։ սրանք են գերմանական, ունգարական և սլավոնական տարրերը։ Աւստրիան չունէր սահմանադրութիւն, չունէր ներկայացուցիչների ժողով, չունէր դաւանութիւնների ու մամուլի ազատութիւն, չունէր ընդհանուր զինուորագրութիւն, չունէր քաղաքական ամուսնութեան օրէնք, պետութեան ֆինանսները ընկած դրութեան մէջ էին։

Այն սարսափելի ջարդը որ ընդունեց Աւստրիան Գերմանիայից 1866 թ-ին, կատարելապէս զգաստացրեց և վերանորոգեց Աւստրօ-Ունգարական պետութիւնը և այս րոպէիս նա եւրոպական երկիրների շարքում ամենաազատ և բարեկարգ պետութիւններից մէն է, Աւստրիայի կայսրը արևմտեան եւրոպական իշխանների մէջ իր ժողովրդից ամենասիրված թագաւորն է։

Մինչև որ ամեն կողմից կրկնում էին թէ Աւստրիան քայքայվելու վրա է,—այդ պետութիւնը օրից օր բարեկարգվում էր և նոր ոյժ ու հաստատ կազմակերպութիւն էր ստանում, շնորհով այն ազատութեան, որ տրվեցաւ նրա պետական կազմակերպութեան բոլոր գործիչներին։

Այժմ Աւստրիայի ֆինանսները լաւ դրութեան մէջ են, պետութիւնը կազմող ամեն մի երկիր ունի իր ինքնավարութիւնը։ իր ներկայացուցիչների ժողովը, մի և նոյն ժամանակ մայրաքաղաքում, Վիէննայում, գումարվում է ամբողջ պետութեան կենտրոնական ներկայացուցիչների ժողովը, Բայխրատը։

Աւստրիան իրագործել է մի դաշնակցական կայսրութեան ձև, որի մէջ պետութեան իւրաքանչիւր մասը իր անհատական կեանքով է ապրում և մի նոյն ժամանակ ընդհանուր պետական շահերով կապված է կենտրոնի հետ էլ։ Իւրաքանչիւր մասին իրաւունք է ճանաչված հիմնել դպրոցներ իր մայրենի լեզուով և ոչ թէ միայն տարրական և միջնակարգ դպրոցներ, բայց Լվովի համալսարանում իրաւունք կայ դասախօսութիւններ կարդալ լեհերէն լեզուով, Պրագայի համալսարանի կէսը գերմանական է, իսկ միւս կէսը չէխական է։

Աւստրիայի սլավեանների մեծ մասը կաթոլիկ դաւանութեան են պատկանում, բայց վաղուց է արդէն, որ ռուսաց սլավեանոսէր և յետադէմ կուսակցութիւնը, առաջնորդութեամբ զանազան Դոստոեվսկիների, Ակսակովների և Կատկովների, պընդում էր և ուզղակի աւստրիական սլավեանների երեսին էր ասում որ նրանք միայն այն ժամանակ բուն սլավեաններ կը դառնան, երբ կը թողնեն կաթոլիկութիւնը և կընդունեն ռուսադաւան եկեղեցին։ Բայց Աւստրիայի սլավեանները շատ լաւ հասկացան որ ցեղական և ազգային յատկութիւնները պարունակվում են լեզուի մէջ և ոչ թէ կրօնի մէջ։ Իրանց կաթոլիկ եղբայրների կողմը բռնեցին և Աւստրիայի յունադաւան սլավեանները, իրանց յոյսը կտրեցին նեղհայեաց ռուս սլավեանոֆիլներից և այժմ ընդհանուր գործակցութեամբ հասան մի մեծ յեղափոխութեան իրանց եկեղեցիներում։ Ոչ թէ միայն Աւստրիայի յունադաւան սլավեանները մոցրին սլավոնական լեզուի տեղ իրանց կենդանի, մայրենի լեզուի գործածութիւնը իրանց եկեղեցական արարողութիւնների մէջ, բայց նորերումս նոյն իրաւունքը ձեռք բերեցին պետութեան բոլոր կաթոլիկ սլավեանները, որոնք այսուհետև լատինական լեզուի տեղ կը կատարեն իրանց եկեղեցական արարողութիւնները լեհերէն, չէխերէն, կամ սերբերէն լեզուով, նայելով թէ ինչ ազգութեան են պատկանում։

Հրէաներն էլ Աւստրիայում միւս հպատակների հետ կատարեալ հաւասար իրաւունքներ են վայելում։

Աւստրիայի այժմեան կայսրը արևմտեան եւրոպայի բոլոր իշխաններից ամենաժողովրդական է։ Նա գիտէ իր վարմունքով գրաւել իր հպատակների սէրը։ Նա սովորել է իր հպատակ ազգերի գրեթէ բոլոր լեզուները, և, օրինակ, լեհական պատգամաւորութեան հետ որ նրան ներկայանում է, նա վարժ կերպով խօսում է լեհերէն լեզուով, ունգարացիների հետ՝ ունգարերէն, չէխերի հետ չէխերէն։ Դա գրաւում է փոքրիկ ազգութիւնների սէրը, երբ իշխանը յարգանքով է վերաբերվում դէպի նրանց մայրենի լեզուն, ամեն ազգութիւնների այդ յատկանիշը և այդ դանձը։

Վերջապէս Աւստրիան ներկայացնում է մեզ Եւրոպայում մի չեղած քաղաքական երևոյթ. մի ահագին դաշնակցութիւն այլ և այլ ամենատարբեր ազգութիւնների, որոնցից իւրաքանչիւրը ապրում է իր ազգային կեանքով, կապված լինելով պետութեան ընդհանուր շահերով և ներկայացնելով մի և նոյն ժամանակ մի զօրեղ պետութիւն, որ եթէ շարունակի այդ ճանապարհով ընթանալ,—քանի կերթայ աւելի ոյժ կը ստանայ և կը միացնի իրան Բալկանեան թերակղզու բոլոր սլավեան ազգութիւններին։

Գուցէ Աւստրիայի գերմանական մասը մի ժամանակ կանցնի Գերմանիային, իսկ Աւստրիան կը դառնայ մի զօրեղ սլավոնական-ունգարական պետութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Ապրիլի 4

Բաւական երաշտութիւնից յետոյ մարտի վերջերում սկսվեցին սաստիկ և անընդհատ անձրևներ, որ դեռ ևս շարունակվում են։ Չը նայելով որ այդ անձրևները շատ օգտաւէտ են ցորենի և գարու արտերին, սակայն չերամապահները, որոնք եղանակի լաւութեան պատճառով—շրջակայ գիւղօրայքում ամեն տեղ սկսել էին չերամները կենդանացնել,—բաւական վնասվեցան, որովհետև ցրտի պատճառով բոլորը փչացան և այսօր հաբիւրաւոր գիւղացիներ կամ չերամապահներ գալիս են Շուշի նորը գնելու, որ այնքան էլ չը կայ։ Արդէն սպասելի է, որ այս տարի այստեղերի բերքերը առատ և լաւ չեն կարող լինել։

Լսում ենք, որ ֆրանսիացի պարոն Լերիսէ նորերումս մեծ քանակութեամբ նոխու չեր-

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԺԱ.

Տաթևի վանքի բոլոր խուցերը լինված էին տաշած քարից, ունէին նեղ լուսամուտներ, նոյնպէս քարէ չրջանակներով, որոնց միջով մի կատու միայն կարող էր անցկենալ։ Շատ հասկանալի է, որ նրանք փեղկերի պէտք չունէին, էս թերթ թուղթ բաւական էր ամբողջ լուսամուտը կալելու համար։

Խուցերից մէկի մէջ դրած էր մի կոճղ, որ տեղացիք «քունդա» էին կոչում, դա կաղմարարների մամուլի նմանութիւնն ունէր և յատկապէս լինված էր բանտի գործածութեան համար։ Մի կալանաւորի ոտները ամրացրած էր այդ կոճղի մէջ։ Նա պառկած էր քամակի վրա և անկարող էր շարժվել, որովհետև թևքերը քամակի կողմից պրկած էին չուանով, որի երկու ծայրերը կապել էին խուցի սիւնին։

Դուռը բացվեցաւ, վանքի աբեղաներից մէկը ներս մտաւ։ Կալանաւորը թէև քնած չէր, բայց գտանվում էր մի տեսակ թմրած դրութեան մէջ։ Դռան ճռռոցը լսելով, նա աչքերը բաց արեց։ Վանքի զինված չաթիներից երկուսը կանգնած էին դրսում։ Աբեղան իր ետևից դուռը կողպելով, մօտեցաւ կոճղին, թուլացրեց նրա գալերանները *), կալանաւորի ոտները դուրս բերեց։ Նա նստեց, բայց թևքերը կապված մնացին։

Կալանաւորի դէմքը բոլորովին այլանդակված էր, աչքերում վառվում էր մի տեսակ տենդային կրակ, մօրուքի և գլխի մազերը անկարգ կերպով խճճված էին։

—Դուք երազման ունէք, հայր սուրբ, դարձաւ նա դէպի աբեղան։

—Ջունեմ, բայց երազների միտքը հասկանում եմ, պատասխանեց աբեղան, նստելով նրա մօտ։—Երևի, երազ էք տեսել, մէլիք։

—Տեսել եմ, շատ վատ երազ, ասաց կալանաւորը հոգւոց հանելով։—Ֆաթալի խանի ընծայած խալաթը երազումս այրվում էր... Ինչքան էլ աշխատում էի հանգցնել, ինչքան էլ ջուր էի ածում, նա աւելի և աւելի բոցավառվում էր...։ Վերջը այրվեցաւ, բոլորովին մոխիր դարձաւ...

—Այդ երազը այնքան պարզ է, որ ամենևին բացատրութեան կարօտութիւն չունի, ասաց աբեղան։—Ֆաթալի խանի ձեզ ընծայած խալաթը նրա ձեզ տուած իշխանութեան նշանակն էր. խալաթը այրվեցաւ, նրա հետ էլ վերջացաւ ձեր իշխանութիւնը

—Ի՞նչպէս, հարցրեց կալանաւորը կատաղած կերպով։

—Մինթէ չէք հասկանում, մի լաւ նայեցէք, թէ որտեղ էք գտնվում և ինչ դրութեան մէջ...

—Այդ ես հասկանում եմ... ասաց կալանաւորը խորին վրդովմունքով.—եթէ խանը մի ժամ առաջ հասցնէր ինձ իր զօրքերը, ես այստեղ չէի գտնվի։ Բայց նրանք հասան այն ժամանակ, երբ ամեն ինչ վերջացած էր...

—Ես յոյս ունէի գտնել ձեզ, մէլիք, բոլորովին զղջացած, բոլորովին փոշմանած, խօսեց աբեղան ծանր կերպով։—Բայց դուք, ինչպէս երևում է, դեռ չէք կամենում հեռանալ հին մեղքերից, դեռ չէք մտածում թողնել ձեր առաջվայ խորհուրդները, որոնք այնքան վնասներ, այնքան դառն ցաւեր պատճառեցին մեր հայրենիքին։ Մինթէ ձեր խիղճը բոլորովին մեռած է, մինթէ նրա մէջ չէ մնացել մի նշոյլ անդամ կենդանութեան։ Ի՞նչի համար կուզէիք պարսիկ զօրքերը, ո՞ւմ դէմ պիտի պատերազմէիք, մեր հայրենիքի աղատչի դէմ, հա։

—Ոչ, մի աւազակի դէմ, մի ապստամբի դէմ, մի անզգամ խռովարարի դէմ, որ ձգտում է հայոց իշխան դառնալ։

—Նա իր գործով արժանի է ոչ միայն հայոց իշխան դառնալու փառքին, այլ աւելի ևս մեծ փառքի, պատասխանեց աբեղան։

—Նա իր գործով արժանի է գլխատման, արժանի է, որ մի թոկ կապէին նրա պարանոցին և քարշ տային Տաթևի բոլոր փողոցներով։

Խօսողը Տաթևի մէլիք Դաւիթ ուրացողն էր։ Մենք արդէն գիտենք, թէ ինչպէս վերջացաւ նրա կռիւը բէկի հետ, գիտենք, նոյնպէս, թէ ինչպէս ջարդվեցան պարսից և հայոց զինուորներից կազմված նրա զօրքերը։ Իր անաջողութիւնից յետոյ ուրացողը մի քանի ձիաւորներով փախաւ դէպի Բարգուշատի կողմերը, որ իր մեծաւորից՝ Ֆաթալի-խանից օգնութիւն ստանայ և կրկին վերադառնայ բէկի վրա։ Բայց Բայինդուր իշխանը նրան հետամուտ լինելով, փախչելու միջոցին բռնեց։ Ֆաթալի խանի օգնական զօրքերը հասան նրան այն ժամանակ, երբ արդէն կալանաւորված էր։

Նրա այցելուն, որ եկել էր հոգևորապէս մխիթարել նրան և դարձի բերել, Խորէն հայր սուրբն էր, վանքի միաբանութեան բաւական զարգացած վարդապետներից մէկը, որ իր երիտասարդ հասակում միացրել էր իր մէջ կրօնի և քաջութեան առաքինութիւնները։ Հանդիպելով կատաղի յամառութեան ուրացողի կողմից, նա սաստիկ վշտացաւ, որ մի հայ մէլիք կարող էր բարոյապէս այնքան ընկած լինել, որ պարսից լուծը աւելի գերադասէր, քան թէ տեսնել մի անկախ հայոց իշխանութիւն։

—Մէլիք Դաւիթը չի խոնարհվի աւազակ Դաւթին, ասաց նա դառնութեամբ։

—Դուք պիտի խոնարհվիք Աստուծոյ կամքի և ժողովրդի պահանջի առջև, մէլիք, պատասխանեց աբեղան հանդարտ կերպով։—Բէկը ժողովրդի պահանջի արտայայտութիւնն է։ Ուրիշ ապացոյց բերել պէտք չէ. գործը ինքը վկայում է իր համար։ Դուք տեսաք, թէ ինչպէս ժողովուրդը առանց հրաւէրքի, ինքնակամ հետևեց նրան։

—Տեսայ, պատասխանեց կալանաւորը հեգնական ժպիտով։—Բայց ի՞նչ ասել է ժողովուրդ։ Ժողովուրդը մի կտոր փափուկ մոմ է, նրան դէպի ո՞ր կողմը և հուփ տաս, դէպի այն կողմը կը թեքվի. նրան ինչ կաղապարի մէջ և դնելու լինիս, այն ձևը կը ստանայ։ Այսօր բէկը յաղթող հանդիսացաւ, ժողովուրդը նրան կը հետևի, իսկ եթէ էգուց ես յաղթելու լինիմ, ինձ կը հետևի։

*) Ժողովրդական բառ, կազմված է գալարել բառից, նշանակում է որ և իցէ մեքենայի այն պտուտակը, որ ամրացնում է, հուփ է տալիս։

ջակայքում Իտալիայի չերամի սերմեր է բաժանած նրա առաջվայ ունեցած արդիւնաբերութիւնը վերականգնելու համար։ Այդ տեսակը, որ աւելի ադնիւն է և գերազանց բոժոժների մէջ, և որը աւելի մետաքս է արտադրում քան միւս տեսակները, մի ժամանակ արդիւնաբերում էր Շուշին և իր շրջակայքը. սակայն քանի տարի է, որ այդ տեսակի գործածութիւնը դադարել է մեր կողմերում։ Զը նայելով որ մի քանի անգամ փորձերը ապարդիւն են անցկացել, ցանկալի կը լինէր, որ չերամի առևտուրով պարապող վաճառականները անուշադիր չը թողէին այդ. մինչդեռ առաջիկայ բերքում, ստիպված կը լինեն ի հարկէ, ինչպէս անցեալ տարի, ամենավատ և փչացած բոժոժներ առնելու։ Գուցէ կը յաջողի այդ տեսակը կրկին տարածել այս կողմերում։

Երէկ կեսօրից յետոյ մի շատ ցաւալի դէպք տեղի ունեցաւ, այստեղ Թիւրքաց Թաղի մէջ։ Մի շատ հին և խարխուլ չինութեան ահագին և ճաքած պատերը երկարատև անձրևներից յետոյ փուլ են գալիս, և ընկնելով փոքր ինչ ցած մի աղքատիկ Թուրք ընակարանի տան կտուրի վրա, ամբողջ տունը յատակին են կպցնում. շուտով յայտնվում է ոստիկանութիւնը և փլատակների տակից հանում են մեռած մօրը իր երեք որդոց դիակների հետ։

Աբէլ Ապրեսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր Համբարձման ոօնի պատճառով տպարանում չէն բանում, այդ պատճառով վաղը, ուրբաթ օր «Մշակի» համարը չենք հրատարակի, այլ մեր լրագրի հետեւեալ համարը կը հրատարակենք շաբաթ օր, մայիսի 23-ին։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, պ. Սամուէլ Սէրգէյեանցից ստացանք 3 ռուբլ յօգուտ «Միացեալ Ընկերութեան։»

—

Մեզ պատմում են որ Թիֆլիսի հացթուխները շատ դժգոհ են իրանց գլխաւորից (ուստաբաշուց), որ անկանոն տուրքեր էր պահանջում նրանցից, անարդար տուգանքներ է դնում նրանց վրա։ Հացթուխները շատ անգամ գանգատվել են արուեստաւորների գլխաւորին, բայց նրանց գանգատը ապարդիւն է մնում։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Զարմանալի կարգ է տիրում այժմ Երևանի կօնսիստորիայում, նորընտիր ատենադպիր Ս. Փիլիպոսեանցի չնորհով։ Այն խնդրատուները, որոնք առաջ տարիներով, հազար ու մի խնդիրքներով հաւիւ կառողանում էին մի մետրիկական վկայական կամ մի այլ Թուղթ ստանալ մեր կօնսիստորիայից, այժմ Փիլիպոսեանցի չնորհով բաւականութիւն են ստանում խնդիրքի տալուց միւս օրը։ Կօնսիստորականները շատ գժգոհ են նոր ատենադպրից, որ փակել է նրանց առջև կաշառք ընդունելու ճանապարհը։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ հաղորդում են մեզ հետեւեալ խօսակցութիւնը Էջմիածնի միաբանութեան մէջ։ Մի վարդապետ դիմում է միւսին. «Հայր սուրբ, լսել եմ որ Գ. վարդապետին մտադիր են եպիսկոպոսութիւն տալ. ճշմարիտ է արդեօք այդ լուրը։» Հայր սուրբը փոքր ինչ մտածելուց յետոյ պատասխանում է. «Շատ հաւանական է որ ճշմարիտ լինի, որովհետև մի քանի շաբաթ է արդէն շատերը նկատում են, թէ Գ. վարդապետը սկսել է եպիսկոպոսի ոճով խօսել և թքել։»

—

Շաբաթ օր, մայիսի 23-ին, երեկոյեան 7 ժամին պ. Արսէն Թոխմախեան, որ նոր է վերադարձել Թիւրքաց Հայաստանի ճանապարհորդութենից, կառավարութեան թոյլատրութեամբ կը կարդայ հայերէն լեզուով մի դասախօսութիւն Արծրունու Թատրոնում «Թիւրքաց Հայաստանի» մասին։ Ահա պ. Թոխմախեանի դասախօսութեան պրոգրամը։ Առաջին մաս։ Վանի նահանգ։—Վան քաղաք և Այգեստան։—Աշխարհագրական և հնագիտական տեղեկութիւններ։—Ազգաբնակութեան մասին վիճակագրական տեղեկութիւններ։—Վանի նահանգի քսան և երկու գաւառներ։—Այդ գաւառների մասին աշխարհագրական և հնագիտական տեղեկութիւններ։—Ճանապարհներ։ — Վիճակագրական տեղեկութիւններ Թիւրքերի, հայերի, ասորիների, քիւրդերի, հրէաների և եզիդիների մասին։—Բուլանըխի, Մանազկերտի և Խնուսի գաւառները։ Երկրորդ մաս։ Մի քանի խօսք եւրոպացի ճանապարհորդների համար։—Առաջին տպաւորութիւն ռուս-Թիւրքաց սահմանի վրա։—Թիւրքաց Հայաստանի ամայութիւնը։—Ցարաբերութիւնները հայերի, Թիւրքերի, ասորիների և քիւրդերի մէջ։—Առուտուրի և արհեստների մասին տեղեկութիւններ։—Վանի շալեղէն գործուածներ։—Ընկերութիւնների և ուսումնարանների մասին։—Միացեալ ընկերութեան գործունէութիւնը։—Սովելոց յանձնաժողով։ — Ռուս Թիւրքաց պատերազմի հետեանքները։—Ցափշտակութիւնների հաշուեցուցակը։ Դասախօսութեան ժամանակ պ. Թոխմախեան ցոյց կը տայ Հայաստանի մի քանի գործուածներ։ Տոմսակները կարելի է ստանալ Արծրունու Թատրոնի կասսայում և պ. Թոխմախեանի մօտ։ Տեղերի գները հետեւեալներն են։ Բազկաթոռները 1 ռուբլ, բացի առաջին կարգից, որ 2 ռուբլ արժէ։ Աթոռները 75 կոպէկ և 50 կոպ., գալլերէա 30 կ. և 20 կ., լօժաները 4 ռուբլ։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, թէ Էջմիածինը աշխատում է գրաւել բոլոր եկեղեցական և վանքային կալուածները և նրանց եկամուտները ինքն ստանալ։ Այդ կալուածների եկամուտները միշտ ստացել է տեղային հոգեոր դպրոցների հոգաբարձութիւնը և ծախսել է դպրոցների պահպանութեան համար։ Շատ հասկանալի է, որ եկամուտները Էջմիածինը իր ձեռքը գցելուց յետոյ, պէտք է դպրոցները փակման վիճակի ենթարկէ։ Արդէն Ամարաս վանքի ընդարձակ կալուածներին ու եկամուտներին տիրել է Էջմիածինը։ Այդ վանքի եկամուտները ստանում էր առաջ դպրոցների հոգաբարձութիւնը, այժմ կօնսիստորիան և տեղային յաջորդը պահանջում են հոգաբարձութիւնից այն բոլոր գումարները, որ շատ տարիների ընթացքում ստացել է ուսումնարանը։ Այդ մասին ժողովրդի և հոգեոր կառավարութեան մէջ խռովութիւններ են ծագել, որոնք հետզհետէ սպառնալից կերպարանք են ընդունում։

—

ՇՈՒՇՈՒՑ գրում են մեզ. Ղազանչեցոց եկեղեցին, որի շինութեան համար աւելի քան 60,000 ռուբլ ծախսվել էր և փողի պակասութեան համար անկատար էր մնացած, այժմ պ. Խանդամիրեանցի յորդորանքով սկսել են մնացած ծախքը հոգալ և կառուցանել։ Եկեղեցու շինութիւնը բոլորովին աւարտելու համար հարկաւոր կը լինի համարեա նոյնքան գումար, որ մինչև այժմ վատնվել է։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են որ կայծակի հարուածից սպանվեցան երեք գիւղացիներ, որոնք կանգնած էին մի պարսպի մօտ։ Գրում են նոյնպէս որ հոգեոր դպրոցի 3-րդ դասատան աշակերտներից մէկը մի փոքրիկ երկաթէ խողովակի մէջ լցնում է վառօդ և մանր գնտակներ, որ մի քանի անգամ արձակելով զուարճանում է, յետոյ խողովակը տրաքելով, կտորտանքը դիպչում են նրա սրտին. պատանին մեռնում է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրները հաղորդում են, որ օրերումս Ֆրանսիական պատգամաւորների ժողովը քննեց պատգամաւորներին ընտրելու ձևի հարցը։ Կարճառօտ վիճաբանութիւններից յետոյ, որին մասնակցեց և Գամբետտա, ժողովը ընդունեց ամբողջութեամբ Բարդուի օրինագիծը, որ վերականգնում է ընտրութիւնները ցուցակներով։ Շրջաններով ընտրելու ձևի կուսակցների բոլոր ջանքերը ոչինչ հետևանք չունեցան, չը նայելով հանրապետութեան նախագահ Գրեվիի միջամտութեանը, որ մի քանի անգամ կարծիք է յայտնել Բարդուի օրինագծի դէմ։ Պարլամենտական այս կռուի ժամանակ Գամբետտա յաղթող հանդիսացաւ և նրա ազդեցութիւնը աւելի էլ մեծացաւ։ Այսուհետև անփախչելի է պատգամաւորների այժմեան ժողովի արձակելը և այժմեան մինիստրների տեղ Գամբետտայի կողմնակիցների ընտրելը։

Պաշտպանելով ցուցակներով ընտրութեան ձևը, Գամբետտա հերքեց իր դէմ ուղղած մեղադրանքները, իբր թէ նա փառասէր դիտաւորութիւններ ունի և յայտնեց, որ նա երբէք ի նկատի չէ ունեցել փոքրացնել իշխանութեան հեղինակութիւնը։ Ընտրութիւնները ցուցակներով, ասաց նա, միջոց են տալիս երկրի կարծիքը հարցնել ընդարձակօրէն։ Այնուհետև նա ապացուցեց, որ ընտրութիւնները շրջաններով անկարելի են դարձնում որևէ վերանորոգութիւն։ Գամբետտայի կարծիքով ցուցակներով ընտրութիւնները վերջ կը դնեն կաշառակերութեանը, որոնք հետևանք են շրջաններով ընտրութիւնների ձևի։ Վերջը նա ասաց. „Պէտք է այսօր վճռել, արդեօք հանրապետութիւնը օգտակար կը լինի, թէ անպտուղ։“

—

ԹԻՒՐՔԻԱ

—

„Ռէյտերի“ ընկերութեան կ. Պոլսից հաղորդում են հետևեալը Միտհադ-փաշային կալանաւորելու մասին։ Արդարութեան մինիստր Զեվդետ-փաշա առաջ հեռագրեց Զմիւռնիա Միտհադ-փաշային, որ նա գայ կ. Պոլիս և ներկայանայ արդարութեան մինիստրին։ Միտհադ-փաշա պատասխանեց, որ նա կուղևորվի կ. Պոլիս Ֆրանսիական դրօշակի պաշտպանութեան տակ։ Երբ յայտնվեցաւ, որ նա ապաստանվել է Ֆրանսիական հիւպատոսարանը, Բ. Դուռը դիմեց Ֆրանսիական դեսպանին, խնդրելով, որ նա

Ես աւելին կասեմ. ժողովուրդը մի հլու գրաստ է, մի մեծ աւանակ է. նրա երասանակը (նօխտան) ում ձեռքը որ ընկաւ, իր ետևից քարշ կը տայ, կը տանէ ամեն կողմ, որ կողմը և ցանկանում է։ Ժողովուրդը սեպհական կամք չունի։

—Դուք սխալվում էք, մէլիք, ասաց աբեղան, —ժողովուրդը սեպհական կամք ունի։ Այդ ուրիշ բան է, որ նա երբեմն ճնշված, երբեմն կաշկանդված է լինում և իր կամքը արտայայտել չէ կարողանում։ Բայց երբ նա կարեց իր կապանքները, այլ ևս նրա թափին ընդդիմադրել անկարելի է։ Նա դառնում է մի հսկայական հեղեղ և փոթորկի նման որոտում է, ալեկոծվում է, առաջ է վազում, խորտակելով, ոչնչացնելով իր առջևից ամեն տեսակ խոչնդոտներ։ Ո՞ր մահկանացուն կարող է ժողովրդի կատաղի հոսանքի առաջը կտրել։ Դժուար է միայն շարժել նրան, երբ միանգամ շարժվեցաւ, այլ ևս այնուհետև կանգ չի առնի, որպէս մի անագին ժայռ, որ բեկվում է լեռան բարձրութիւնից, գլորվում է դէպի ցած, և առաջ ընթանալով, հեղհետէ աւելի և աւելի սաստկացնում է իր թափը....

—Մինչև ընկնում է անդունդի մէջ... կտրեց կալանաւորը աբեղայի խօսքը։—Բայց գիտէք, հայր սուրբ, այդ ձեր նկարագրած ահագին քարաժայռը իր գլորման ընթացքում, միւս ժայռերին զարկվելով, որքան փշրվում է, որքան մաշվում է, և միայն նրա կտորտանքն են հասնում մինչև սարի ստորոտը...

—Գիտեմ... ինչպէս էլ և լինի, շարժման մէջ կեանք կայ։

—Դիակի շարժումները կեանքի նշաններ չեն, նրանք բոպէական ցնցումներ են միայն, պատասխանեց կալանաւորը և սովորական դառն ծիծաղը դարձեալ երևաց նրա գունաթափ շրթունքի վրա։— Հայ ժողովուրդը կատարեալ դիակ է։ Դիակին կարելի է ձեռքով բարձրացնել, ոտքի վրա կանգնեցնել, բայց հէնց որ քաց թողեցիր, իսկոյն կընկնի, կը տարածվի դեռևի վրա, դարձեալ անշարժ կը մնայ։

—Թէ որքան դուք սխալվում էք ձեր կարծիքի մէջ հայոց ժողովրդի վերաբերութեամբ,— ես այդ մասին հարկաւոր չեմ համարում խօսել, մէլիք, ասաց աբեղան։—Բայց դիցուք թէ այդպէս լինի, որպէս դուք կարծում էք, թէ հայ ժողովուրդը մի դիակ է. միթէ դուք չէք մտածում կեանք տալ դիակին, քանի որ ինքներդ նոյն ժողովրդի ծնունդն էք, քանի որ ինքներդ ազգով հայ էք, թէև մահմեդական կրօնը ընդունած։

—Ես, եթէ կը ցանկանայի հայ ժողովրդի հետ գործ ունենալ, ոչ այլ կերպով չէի ընդունի, բայց միայն նրա գլուխը լինել և ոչ ոքի ստորադրեալ։

Վերջին խօսքերը բարկութեան չափ վրդովեցրին աբեղային, և նա չը կարողանալով պահպանել իր սառնասրտութիւնը, պատասխանեց.

—Դուք դեռ ձեր հին ցնորքների մէջն էք գտնվում, մէլիք։ Ով որ ձգտում է ժողովրդի գլուխ լինել միայն նրան կեղեքելու, միայն նրան կողոպտելու համար, եթէ հասնելու ևս լինի իր նպատակին, չէ կարող երկար պահպանել իր դիրքը։ Բռնաւորների կեանքը կարճ է լինում։ Ժողովրդի գլուխ լինելու համար պէտք է պաշտպանել նրա բարին, պէտք է ունենալ նրա հետ նոյն յարաբերութիւնները, ինչ յարաբերութիւններ որ ունի մարմնի բնական գլուխը մարդու անդամների և ամբողջ կազմուածքի վերաբերութեամբ։ Դուք անբնական գլուխ էիք, մէլիք,—հայ պարսկի հոգով, պարսկի սրտով։ Այս պատճառով էլ ժողովուրդը մերժեց ձեզ։ Դուք այժմ ամեն ինչ կորցրել էք. ձեզ մնում է երկու բան՝ կամ զղջալ և բէկից ներում ստանալ, կամ կրել ձեր դատապարտութեան պատիժը։ Որը կամենում էք, ընտրեցէք։ Ես հաւատացած եմ, որ բէկը այնքան մեծահոգի է, որ կը ներէ ձեզ, եթէ զղջալու լինիք։

—Ես ինձ չեմ հասցնի այն ստորութեան, որ որ և իցէ հայից ներում խնդրեմ, պատասխանեց կալանաւորը արհամարհանքով։— Ինչ լինելու է, թող լինի. ես կը խոնարհվեմ ճակատագրի առջև։

—Ձեր ճակատագիրը դրանով կը վերջանայ, որ բէկը կը հրամայէ այսօր գլխատել ձեզ։

—Այդ ինձ համար մի և նոյն է, բայց ես հաւատացած եմ, որ իմ որդին վրէժխնդիր կը լինի հօր արեան համար։

—Այդ յոյսը մի ունեցէք, ձեր որդին չէ կարող այդ անել։

—Կարող է. նա պարսիկ զօրքերով կը ոչնչացնէ բէկի բոլոր զօրութիւնը։

—Եթէ կենդանի լինէր.... Ձեր որդին սպանված է։

—Որդիս... սպանված է... գոչեց նա կատաղի հառաչանքով և նրա գլուխը թեքվեցաւ կոճղի վրա։

Աբեղան հասցրեց երկրորդ և աւելի սաստիկ հարուածը.

—Այո, սպանված է. գիտէք ում ձեռքով. մի գիւղացի աղքատ կնոջ ձեռքով, որը նոյն ժողովրդի զաւակն է, որին մի բոպէ առաջ դիակ էիք կոչում։ Ցեմնում էք, այդ ժողովուրդը դիտէ հարկաւորած ժամանակ պատժել իր բռնաւորներին։ Նա զգում է անիրաւ ձեռքից կրած վերքը և աշխատում է վրէժխնդիր լինել։ Բայց դիակները ոչինչ չեն զգում։

Վերջին խօսքերը չը լսեց կալանաւորը։ Բոթաբեր լուրը միանգամայն խորտակեց թէ նրա սիրտը և թէ նրա յոյսերը։ Մինչև այժմ նա հանգիստ էր, հանգիստ էր գլխաւորապէս այն պատճառով, որ մտածում էր, եթէ իրան կը գլխատեն, եթէ իրան կախաղան կը բարձրացնեն, դարձեալ կը թողնէ երկրի վրա իր շարունակութիւնը—որդուն։ Որդին կը պահպանէ անիրաւութեամբ ձեռք բերած իշխանութիւնը։ Իսկ այժմ բոլորը կորաւ, բոլորը ոչնչացաւ։ Փառասիրութեան ցանկութիւնը աւելի զօրեղ էր նրա մէջ քան որդեսիրութեան զգացմունքը։ Եւ նա ափսոսում էր ոչ այնքան սպանված որդուն, որքան կորած փառքը։ Արտասուքի ոչ մի կաթիլ չը յայտնվեցաւ նրա անդութ աչքերում, որ այժմ լի էին վայրենի կատաղութեամբ, միայն երբեմն խորին հառաչանքներ դուրս էին թռչում խստասիրտ մարդու ջախջախված կուրծքից։ Երբ նա փոքր ինչ հանդստացաւ, հայր սուրբը խօսեց.

—Այսպիսի յուսահատական բոպէներում միակ մխիթարութիւնը մարդ կարող է գտնել Աստուծոյ մէջ։ Դիմեցէք Աստծուն, մէլիք, հեզութեամբ և խոնարհված սրտով, նրանից Թողութիւն խնդրեցէք։ Ձեր աշխարհայինը թշուառութեամբ

հրամայի Ֆրանսիական հիւպատոսին յանձնել Միհադին Թիւրքաց իշխանութեանը։ Ֆրանսիական դեսպանը հրաման ստացաւ իր կառավարութենից Միհադին Թիւրքիային յանձնելու մասին, որովհետև նա մեղադրվում է ընդհանուր օրէնքների դէմ յանցանք գործելու մէջ։ Այդ ժամանակ Ֆրանսիական հիւպատոսի տունը Զմիւռնիայի մէջ շրջապատված էր Թիւրքաց զօրքերով։ Սուլթանը յանձնեց գեներալ Դրէյֆուսին իմանալ դեսպանների կարծիքը Միհադի պահանջած ապաստանի և օտար հիւպատոսների պաշտպանութեան մասին։ Դեսպանները այդ հարցի մասին խորհրդակցելուց յետոյ պատասխանեցին, որ հիւպատոսները իրանց իրաւունքները չափազանցեցրած կը լինեն, եթէ կը պաշտպանեն Միհադ-փաշային։ Նրանք պէտք է սպասեն հրահանգների իրանց կառավարութիւններից։

„Daily News“ լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ պալատական շրջանները հակված են խորհուրդ տալ սուլթանին Աբդուլ-Ազիզի սպանման քննութիւնը դադարեցնելու մասին։ Պատմում են, որ մահմեդականները թշնամաբար են վերաբերում այդ քննութեանը և եթէ նա շարունակվի, փաշաներից շատերը կը մեղադրվեն։ Լուր է տարածված, որ Մահմուդ-Դամատ և Նուրի-Դամատ փաշաները կարտաքսվեն Կ. Պոլսից, իսկ Ֆահրի-բէյ կաքսորվի և դրանով գործը կը վերջանայ։

Զիջած երկիրները Յունաստանին յանձնելու մասին համաձայնութիւնը արդէն կայացաւ և յոյն-թիւրքական դաշնագրութիւնը ստորագրված է Թիւրքաց հաւատարմատարներից և պետութիւնների դեսպաններից։

Բ. Դուռը վճռապէս հերքեց լրագրական լուրերը, իբր թէ նա շարունակում է պատերազմական պարաստութիւնները Թէսսալիայի և Էպիրոսի մէջ և յայտնեց, թէ նա պատրաստ է իր բոլոր պարտականութիւնները անյապաղ իրագործել։ Ուրեմն Թիւրքիայի և Յունաստանի սահմանները որոշվելուց յետոյ առժամանակ խաղաղութիւն կը տիրէ այդ երկու պետութիւնների մէջ։ Կանդիան առաջվայ պէս կը սպասէ իր ազատութեանը Թիւրքաց իշխանութիւնից, իսկ Ալբանիայի մէջ կը շարունակվեն անկարգութիւնները, մինչև այդ երկրի մէջ ինքնավարութիւն մտցնվի։

Անկարգութիւնները Թիւրքիայի մէջ կը շարունակվեն միշտ, քանի որ նա իշխում է օտարազգի ժողովուրդների վրա, իսկ ինարիզները և կաշառակերութիւնը այդ երկրի կառավարչական միջոցները կը լինեն։

ՌՈՒՄԻՆԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը։ Մայիսի 10-ին Բուխարեշտի մէջ վերջին քայլը կատարվեց Ռումինիան անկախ թագաւորութեան ստիճանին հասցնելու համար։ Այդ օրը ռումինական թագաւոր Կարլ հանդիսով իր գլխին դրեց ռումինական թագը, որ պատրաստված է մի համեստ մետալից, այն է Թիւրքաց թնդանօթի պողպատից, որ ռումինները վերջին պատերազմի ժամանակ վերցրին Պլեվնայի մօտ։

Ռումինների պատմութիւնը այժմ նոր շրջանի մէջ է մտնում գերմանական թագաւորող տան իշխաններից մէկի առաջնորդութեամբ։ Կարլ առաջինի պողպատեայ թագը յիշեցնում է նրան և նրա ժողովուրդին անցեալ պատերազմական զոհերը, որ նրանք մատուցին քաղաքական անկախութիւն ստանալու համար և որոնք դուցէ դարձեալ կը պահանջվեն այդ անկախութիւնը և ազգային գոյութիւնը պահպանելու համար։

Ռումինական իշխանի թագադրութեան մասին Բուխարեշտից հեռագրում են։ Կէսօրին, մայիսի 10-ին ռումինական թագաւորի թագադրութիւնը կատարվեցաւ բաց օդի տակ։ Թագաւորը և թագուհին Լէօպոլդ Հոհենցոլերնի և նրա երկու որդիների հետ բարձրացան դահը, որ պատրաստված էր հրապարակի վրա։ Թագի օծումը կատարվեցաւ ռումինական և մոլդաւական հոգևորականութեան և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ։ Ժողովուրդը ոգևորված ողջունում էր թագաւորին պալատ վերադառնալու ժամանակ։ Քաղաքը շքեղութեամբ զարդարված էր։

ԱՆԳԼԻԱ

Լօնդօնից հաղորդում են։ Բարաելեմի Սենտ-Իվեր յանձնեց Ֆրանսիական դեսպանին Լօնդօնի մէջ, Շալմել Լակուրին, հաւատացնել անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ Գրենվիլին, որ Ֆրանսիան բոլորովին մտադիր չէ միացնել իր հետ Տունիսի որ և է մասը։ Շալմել Լակուր յայտնեց անգլիական կառավարութեանը, որ Ֆրանսիան արդէն մի մասնաժողով է նշանակել մաքսային դաշնագրութիւնը նորոգելու համար։ Անգլիական կառավարութիւնը հրատարակեց իր դիպլոմատիական գրագրութիւնը Ֆրանսիայի հետ Տունիսի խնդրի վերաբերութեամբ։ Այդ գրագրութիւնից երևում է, որ լորդ Սալիսբիւրի Բերլինի կոնգրեսի ժամանակ մի խօսակցութիւն է ունեցել վագինգտօնի հետ, որի ժամանակ առաջինը ասել է, թէ Անգլիան արգելք չի դնի Ֆրանսիայի ազատ գործողութիւններին Տունիսի մէջ։ Բացի այդ լորդ Գրենվիլ Լէօն Սէի հետ խօսելու ժամանակ ասել է, որ անգլիական կառավարութիւնը Տունիսը Թիւրքիայի մի մաս է համարում և նա ոչ միջազգային և ոչ բարոյական իրաւունք ունի վճռել Տունիսի հարցը, բայց Անգլիան թշնամութեամբ չի նայի այն ազդեցութեան վրա, որ ունեցել է և կունենայ Ֆրանսիան Տունիսի գործերի վրա։ «Times» լրագիրը, քննելով այդ դիտումները, պախարակում է Սալիսբիւրիի յայտնութիւնները։

Լօրդերի ժողովի մէջ մարկիզ Սալիսբիւրի մի չափազանց յարձակողական ճառ կարդաց իրլանդական կալուածական օրինագծի դէմ։ Պահպանողականների „Standart“ լրագիրը այդ ճառը չափազանցութիւն է համարում։ Շատերը վախենում են, որ այդ ճառը անբաւականութիւն կը ծագեցնի լօրդերի ժողովի և համայնքների ժողովի մէջ։

Անգլիական մամուլի մի մասի անընդհատ յարձակմունքները Ֆրանսիայի վրա միայն քաղաքական պատճառներից չեն առաջացած։ Դրանց գլխաւոր պատճառն այն է, որ Ֆրանսիական կառավարութիւնը չէ կամենում վերանորոգել 1860 թուականի առևտրական դաշնագրութիւնը Անգլիայի հետ։ Նորերումս հրատարակված Ֆրանսիական մաքսային գների համեմատ Ֆրանսիա բերված ապրանքներից հարկ է վերցնվում ոչ թէ նրանց գնի, այլ ծանրութեան և մեծութեան համեմատ։ Այդ փոփոխութեան շնորհով անգլիացիները ստիպված են մեծ հարկեր վճարել իրանց ապրանքները Ֆրանսիա տանելու համար։ Նորերումս լօրդ Գրենվիլ յայտնեց պարլամենտին, թէ այն ժամանակից, երբ լրացել է 1860 թ. առևտրական դաշնագրութեան ժամանակամիջոցը, անգլիական կառավարութիւնը շատ անգամ առաջարկել է Ֆրանսիային նոր դաշնագրութիւն կապել, բայց այդ առաջարկութիւնները ոչինչ հետևանք չեն ունեցել։ Այժմ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ բանակցութիւններ են սկսվել առևտրական դաշնագրութիւն կապելու համար։ „Journal des Debats“ լրագրի կարծիքով Ֆրանսիան այդ հարցի մէջ Անգլիային մի քանի զիջումներ կանի, որպէս զի նրան հանգստացնի Տունիսի վերաբերութեամբ։ Այդ զիջումները անհրաժեշտ են Անգլիայի և Ֆրանսիայի նախկին բարեկամութիւնը վերականգնելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մայիսի։ Բերլինից մայիսի 18-ից հեռագրում են, որ գերմանական կայսր Վիլհելմ ընդունեց ռուսաց կանցլեր իշխան Գորչակովին։

ԴՈՒԲԼԻՆ, 18 մայիսի։ Կալուածական միութեան կազմակերպող կեալ կալանաւորված է։ Նա մեղադրվում է ազգաբնակութեանը գրգռելու մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 87 կ., երկրորդ 94 ր. 25 կ., երրորդ 94 ր. 25 կ., չորրորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 75 կ., երկրորդ 217 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 12 կ., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ 93 ր. 50 կ., ոսկի 8 ր. 9 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24,25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

անցաւ, գոնէ միւս կեանքում դուք երջանիկ կը լինէք, եթէ կը զղջաք, եթէ կը խոստովանվէք ինձ մօտ ձեր մեղքերը։

—Եթէ ես գործել եմ մի մեղք, լաւ է, որ նրա մէջ մեռնեմ, ասաց կալանաւորը դառն ատելութեամբ.—դա կը լինի մի ազգու բողոք բարութեան Աստուծոյ դէմ, որ որդուս ինձանից խլելուց յետոյ՝ ինձ ձգեց այդ կապանքների մէջ։

—Դուք հայհոյում էք Ամենակալի արդարադատութիւնը, մելիք։ Դարձեալ կրկնում եմ, այսօր բէկը կը տայ ձեր մահուան դատավճիռը. դեռ բաւական ժամանակ ունէք զղջալու և ներումն խնդրելու։

—Ես ներում խնդրելու սովորած չեմ, ոչ երկնքից և ոչ երկրի վրա բնակվող մարդերից։ Լաւ է, որ ինձ հանգիստ թողնէք, հայր սուրբ։

Աբեղան վեր կացաւ, ներս կանչեց դրսում կանգնած չաթրներին. կրկին կալանաւորի ոտները ամրացրին կոճղի մէջ, և խուցի դուռը կողպելով, նրան թողեցին այնտեղ միայնակ։

Նոյն աւուր կէսօրային պահուն Ցաթևի հրապարակի վրա հաւաքվել էր խուռն բազմութիւն։ Բոլորը անհամբերութեամբ սպասում էին հանդիսատես լինելու երկրի բռնաւորի և աւերիչի մահուան պատժին։ Բոլորի աչքերը դարձրած էին դէպի վանքի ճանապարհը, որտեղից պէտք է բերէին մահապարտին։

Հրապարակի մէջտեղում կանգնած էին զինված մարդիկ, թողնելով իրանց միջնավայրում բոլորակ տարածութիւն։ Այստեղ դանակը սրելով ման էր գալիս արբած դահիճը, ոտքից ցըզլուխ կարմիր հագնված։

—Ի՞նչպէս արդար է Աստուծոյ դատաստանը, ասաց մի գիւղացի իր մօտ կանգնած հանդիսականին.—հինգ տարի առաջ չարագործը հէնց այս հրապարակի վրա գլխատել տուեց քսան և հինգ անմեղ երիտասարդներ, և որպիսի քաջ երիտասարդներ, ամեն մէկը հազար մարդու արժէր։ Հիմա ինքը նոյն տեղում գլխատվում է։

—Ցիշում եմ... հոգւոց հանելով ասաց միւսը.

—այդ երիտասարդները պատկանում էին վանքեցի խէչօի խմբին, որոնք ամրացել էին Ցուրբայ բերդում, կողոպտում էին պարսիկ հարկահաններին, և զանազան միջոցներով սպանում էին այն հայերին, որոնք պարսիկներից պաշտօններ ընդունելով, նեղացնում էին իրանց ազգայիններին։ Չարագործը կաշառեց մի գիւղացու, և այդ անիրաւը իրան բարեկամ ձևացնելով խէչօի մարդիկներին, իր տան դռները ամեն ժամանակ բաց էր անում նրանց առջև։ Մի գիշեր հարբեցրեց նրանց, քնացրեց, յետոյ մատնեց ուրացողի եսաւուլների ձեռքը։

Վանքի ճանապարհի վրա երևաց մի խումբ, որ շարժվում էր դէպի հրապարակը։

—Բերում են... լսելի եղաւ ամեն կողմից։

Հրապարակի վրա հաւաքված բազմութիւնից շատերը վազեցին դէպի այն կողմը. շատերը անշարժ մնացին իրանց ընտրած տեղում, որ մի ուրիշը չը կանգնէ այնտեղ, որ կարողանան լաւ տեսնել։

Բերում էին մահապարտին։ Ամեն բերանից լսվում էին անէծք, նզովք, հայհոյանք, որ խառնվում էին ուրախութեան բացականչութիւնների հետ։ Մանուկները, որոնց սիրտը ատելի անկեղծութեամբ է արտայայտում ամբոխի զգացմունքը, հարիւրներով խմբվել էին չարագործի շուրջը, թնդեցնում էին օդը իրանց աղաղակներով։ Նրանք երգում էին մի ժողովրդական ասացուածք, որ առածի ձև էր ստացել։

«Լոյսը Լուսաւորչի հաւատին,

«Վայ ուրացող մարդին»։

Երգը թռչում էր հարիւրաւոր մանուկների բերանից, և որպէս բարկութեան չանթեր, տարածվում էր դէպի ամեն կողմ։ Ոմանք մանուկներից քարեր էին վեր առնում և ձգում էին դատապարտեալի վրա։ Նա այդ միջոցին նմանում էր մի կատաղած շան, որ չորս կողմից կաշկանդված, տարվում էր դէպի խեղդանոցը։

Մահապարտին նստացրել էին սև ուանակի վրա, առանց համեմի, երեսը դէպի դաւակի կողմը դարձրած։ Սանձի փոխարէն նրան բռնել էին տուել ուանակի պոչը։ Այդ խայտառակութիւնը աւելի սպանիչ էր քան թէ մահը, այն մարդու համար, որ սովորել էր հեծնել ամենաընտիր նժոյգների վրա, զարդարած թանդագին ասպազէնով։

Երբ նրան հասցրին հրապարակը, ամբոխը ճեղքվեցաւ և ճանապարհ բաց արեց։

Զինուորները մօտեցան նրան, ցած բերեցին ուանակից։ Այժմ կանգնած էին նրա մօտ երկու մարդիկ, մէկը դահիճը դանակը ձեռին, միւսը քահանան խաչը ձեռին։ Վերջինը սկսեց մխիթարել թշուառին հոգևոր խօսքերով, յորդորում էր խոստովանվել և համբուրել խաչը։ Դատապարտեալը մերժեց որպէս խոստովանութիւնը, նոյնպէս և խաչի համբուրելը։ Նրան ասեցին՝ չէր ցանկանայ, որ կանչէին մի մահմեդական մոլլայ։ Այդ ևս մերժեց նա։

—Շուտով... մի ուշացրէք... աղաղակում էր ամբոխը, որ այդ ժամանակ գտնվում էր սաստիկ վրդովմունքի մէջ։

Դահիճը մօտեցաւ, կապեց դատապարտեալի թևքերն ու ոտները։ Մի ձեռքի հարուածքով նա փայտի նման ընկաւ, տարածվեցաւ գետնի վրա։

Ոչ մի դէմք ցաւակցութեան նշան չէր ցոյց տալիս, ոչ մի սիրտ չէր բաբախում նրա համար։ Բոլորի սրտերը լցրել էր նա թոյնով և դառնութեամբ։

Մանուկների բազմութիւնը դարձեալ սկսեց եղանակել իր երգը։ Այդ երգի հնչիւնները հասան դատապարտեալի ականջներին ուղիղ այն րոպէում, երբ դահիճը բռնելով նրա մօրուքից, դանակը դրեց կոկորդի վրա։

«Լոյսը լուսաւորչի հաւատին,

«Վայ ուրացող մարդին»...

Կրկնեց և թշուառը, իսկ դահիճը աւարտեց իր գործը։

Ամբոխի մէջ տիրեց ընդհանուր ցնծութիւն, երբ դահիճը չարագործի կտրած գլուխը, ցցելով նիզակի ծայրին, բարձրացրեց օդի մէջ։

Այդ միջոցին սկսեցին ածել դաւուլ և զուռնայ, և դահիճը շրջապատած նուագածուներով, սկսեց նիզակի ծայրին ցցած գլուխը ման ածել Ցաթևի փողոցներում։ Կնիկները դուրս էին գալիս տներից, թքում էին նրա վրա և տալիս էին դահճին մի քանի սև փող։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԻՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Եթէ գինին բովանդակում է իր զանգուածի մէջ արևի ճառագայթները և մեր մոլորակի (երկրի) ծածկեալ ուժերը, այդ ժամանակ իսկապէս նա ներկայանում է մեզ, որպէս մի զարմանալի հեղուկ, որը իր յակութեայ և ոսկեփայլ կաթիլներով աւելացնում է մեր մէջ կենսատու ջերմութիւն, բաշխում մեզ զուարթարար լոյս և եռանդ, և տալիս է չարժում մեր ամբողջ կազմուածքին։

Գինին, իբրև արդիւնք մարդկային ձեռքի և քնութեան, միացնում է և կենտրոնացնում է իր մէջ որպէս երկրի ամենազօրաւոր ուժերը, այնպէս էլ մարդկային խելքի և հնարագիտութեան արհեստը։

Գինու մէջ թաղնված է մի ամենակարող զօրութիւն. նա մինչ այն աստիճան զօրեղ դրդիչ է դէպի չարութիւն, որ ոչ սակաւ անգամ եղել է մեր խելքի դահիճը և մեր բարք ու վարքի փչացնողը... Նա մի և նոյն ժամանակ կարող է լինել մեր բաղդաւորութեան աղբիւր պատճառը, կարող է ներշնչել մեր մէջ մեր կեանքի ընթացքում ճշմարիտ բարութիւն, պահպանելով շատ տարիներ մեր թանգագին գոյութիւնը...

Ի զուր չէր, որ գիւղաքանութիւնը բարձրացրեց գինուն մինչև Օլիմպոսի փառքը, իսկ բոլոր նոր կրօնների եկեղեցական արարողութիւնների մէջ ամենաբարձր խորհուրդները սրբագործվում են գինիով։

Գինին մարդկային պատմութեան էական մասներից մէկն է։ Նրա պտղաբեր ազդեցութիւնը անցնում է մարդկային զուարճութեան բոլոր աստիճանների վրայով, որ տանում է վրսեմ օրհներգութիւնից մինչև լկտի խրախութիւնները, մեծահոգի բերկրութիւնից մինչև անառակութիւն, տանում է խորհրդաւոր երգից, որով զարթնում է մի սրկացած ժողովուրդ, մինչև արբեցած ամբոխի կատաղի աղաղակները, որոնք երբեմն ոչնչացնում են ամբողջ սերունդներ, երբեմն խլում են մի ազգաբնակութիւնից նրա տասներորդ կամ աւելի մասը...

Յովհան ոսկեբերանը հետեւեալ բանաստեղծական խօսքերովն է արտայայտում իր օրհնութիւնը և անէծքը գինու վերաբերութեամբ՝ «Գինին Աստուծոյ ստեղծագործութիւնն է. իսկ արբեցութիւնը սատանայի ստեղծագործութիւնն էն»։

Եթէ, արդարև, գինին համարվում է աւելի առողջարար և օգտաւէտ մի ըմպելի, ուրեմն պէտք է միշտ պահպանել նրան այն պայմաններով, որ համաձայն լինէին նրա արժանաւորութեանը։

Այդ մասին ահա ինչ միտք է յայտնում պ. Պաստէրը. «Որքան աւելի մտածում ես գինու հիւանդութեան պատճառների մասին, այնքան աւելի համոզվում ես, որ գինեգործութեան արհեստը և նրա խնամատարութեան եղանակը, որ դարերի փորձը համարում է անհրաժեշտ այդ կարևոր արդիւնաբերութեան համար,—պէտք է կատարելագործված լինեն։ Առաւելապէս ներգործութիւն են անում գինու մէջ գտնվող օտարակեր էակները թէ իրանց կեանքի պայմաններով և թէ իրանց գործողութեան ձևերով։ Այնպէս որ, եթէ կարելի լիներ որ և իցէ փորձված միջոցով ոչնչացնել գինու փչանալու անմիջական պատճառները, այն ժամանակ, անտարակոյս, կը կազմվէր մի նոր արհեստ այդ թանգագին ըմպելիի պատրաստութեան համար»։

Գ.-Լիսակ առաջինը եղաւ, որ փորձով ապացուցեց, որ օդի թթուածինը անհրաժեշտ է խաղողի հիւթի (քաղցուի) խմորվելու համար։

Պ. Պաստէրի հետազօտութեան համեմատ գինին թթուածնի արդիւնք է. նրա ազդեցութեան ներքոյ գինին կարող է պահպանվել շատ տարիներ, այսինքն կարող է դառնալ հին գինի. թթուածինը փոխում է նոր գինու տիպ համը և նրան ախորժելի համ և լաւ արժանաւորութիւններ է տալիս, և վերջապէս, թթուածինի ազդեցութեան պատճառով գինու անուշհոտութիւնը աճում է և պահպանվում է նրա մէջ։ Մէկ խօսքով, գինու բոլոր արժանաւորութիւնների և նրա երկար մնալու գլխաւոր պատճառն է թթուածինի միաւորութիւնը խաղողի հիւթի հետ։

«Ես կարծում եմ, աւելացնում է գիտնական ակադէմիկոսը, որ գինիների հիւանդութիւնները, որքան ես ուսումնասիրել եմ, ունեն փոխադարձ յարաբերութիւն օտարակեր բոյսերի զարգանալու հետ, որոնք գտնվում են գինու մէջ, այնպէս որ, եթէ նրանք չը լինէին, գինին առանց փչացնելու կը մնար երկար ժամանակ, կը հընանար, եթէ նա չը ենթարկվէր փոքր առ փոքր և աստիճանաբար թթուածինի ազդեցութեանը»։

Որովհետև պ. Պաստէրի բոլոր խնդիրը նրանումն է կայանում, թէ պէտք է չը թողնել որ գինու մէջ զարգանային պարազիտներ, այսինքն օտարակեր էակներ, այդ մասին նա առաջարկում է իր միջոցները հետեւեալ խօսքերով։

«Ես հասայ լաւ հետեանքների շատ հասարակ և էժան հնարներով, որոնք այն մեծ արժանաւորութիւնն ունեն, որ չեն պահանջում ոչ մի խառնուրդ ուրիշ նիւթերից պատրաստված։

«Գինու մէջ գտնվող պարազիտների սերմունքը և նրանց կենդանութիւնը ոչնչացնելու համար, բաւական է բարձրացնել գինու ջերմութեան աստիճանը 50-ից մինչև 60°։

«Գինին երբէք չի փչանայ այդ նախազգուշութիւնը գործ դնելուց, և որովհետև ոչինչ չէ արգելում դրանից յետոյ ենթարկել նրան օդի թթուածինի աստիճանաբար ազդեցութեանը, (որը իմ կարծիքով միակ աղբիւրն է գինին ժամանակով բարելաւացնելու համար) ուրեմն, շատ պարզ է, որ այդ հնարը ունի իր մէջ խիստ օգտաւէտ պայմաններ։

«Ես կրկնում եմ, որ գինու ջերմացնելը չէ փոխում ոչ նրա գոյնը, ոչ նրա պարզութիւնը, ոչ նրա համը և ոչ էլ անուշահոտութիւնը։»

Այդ կանոնները ի նկատի առնելով, Սէն-Բաֆայէլի խաղողի այգիների տէրերը, գործ են դընում իրանց գինիների վրա մեծ քիմիկոսի ցոյց տուած միջոցները։

Նրա ցոյց տուած թանգագին միջոցի յարմարութիւնը, կարեորութիւնը գնահատվեցաւ ամբողջ լուսաւոր Եւրոպայում, և հրատարակվեցաւ այն ժամանակ, երբ ֆրանսիական ներկայացուցիչների ժողովը նշանակեց պ. Պաստէրին ազգային պարգև։

Սէն-Բաֆայելեան գինին խորհուրդ են տալիս գործ ածել ամեն ժամանակ, երբ պէտք էր մարսողութեան գործողութիւնը զօրացնել։ Այդ գինին չափազանց օգնում է այն դէպքերում, երբ մարդու կենսական ուժերը սպառվում են և մարսողութիւնը թուլանում է։

Շատ օգտաւէտ է ուժաթափ կամ նոր առողջացող մարդկանց համար, և մի և նոյն ժամանակ այդ գինին օգնել է շատ հիւանդների կեանքը ազատելու, և ցոյց է տուել մեծ ծառայութիւն մարմնի թուլութեան ամեն տեսակների մէջ։

Սէն-Բաֆայելեան գինու չափաւոր գործածութիւնը ընդունված է որպէս հարկ է, նա անմիջապէս տալիս է մարդուն եռանդ, կաղդուրում է նրան և կանոնաւորում է նրա մարսողութիւնը։

Անբօգուտ փոքր չափով գործածութիւնը շատ օգտաւէտ է, առաւելապէս այն ժամանակ, երբ նա միաւորված է, օրինակ, ինչպէս Սէն-Բաֆայելեան գինու մէջ, ահագին քանակութեամբ հասարակ մարմինների հետ, որոնք ունեն տոպ և տանինական յատկութիւն, և որոնք դարձնում են նրանից փափկացնող գործիչ, շատ անվնաս, նպաստող մարսողութեան գործողութիւնները վերականգնելու, և մի և նոյն ժամանակ խիստ աջող կերպով գրգռող ջղային սիստեմայի գործունէութիւնը։

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехшованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ գրվել և տարեկան 10 ռուբլի վճարել կարելի է։

1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, կարլ Կարլովիչ Կեստերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ։

2) Վիկտոր Ալէքսանդրովիչ Դինդելշտեդտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամշեվի տանը, Սօլդատսկի բազարի վրա։

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ։

4) Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Բրունսի մօտ։ Միխայելովսկայա փողոցի վրա, ռուսական մագազինում։

„ԽԵՆԹԸ“
ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻՒ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է 1 ռուբլ 20 կոպ։

ԱՐԾՐՈՒՆՈՒ գալլէրէում յուլիս ամսից վարձով տրվում է ԹԱՏՐՕՆԻ մօտ եղած բուֆէտը և բէստորանը։ Ցանկացողները թող դիմեն Արծրունու գալլէրէայի կանտորա։

10—10

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօկօլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամանեղներ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թմաքեր, դուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ։ Արծրունու գալլէրէում։

100—100

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ծրծիչ մեքենաներ 1 ր., ԲԱԺԱԿՆԵՐ 12 կ., ՋՐԱՄԱՆՆԵՐ 50 կ., Հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—50 ր., ժիլետներ 75 կ., ֆարտիկներ 4 ր., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ 4 ր. տղամարդկերանց 14 ր., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 ռուբլ, մակինտոշներ 6 ր., Հին պօրտվէյն և խերես 1 ր. 20 կ. շիշը, կօնիակ առաջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԻԿՈՒԼԻ 50 կ.. թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑ 1 ր, 40 կ. առանց թղթի։ Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ԱԼԲՕՄՆԵՐ շատ էժան։

15—15

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐՔԵՐԸ։

1) Երկու մանրավէպ՝ Ալֆոնս Դոդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
2). Պօղնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան։ . . . . . 20 կ.
3). Պարապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ն. Տ. Աւետիքեան։ 25 կ.
4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղուս, Աղցախեցի . . . . . 30 կ.
5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի։ . . . . . 15 կ.
6). Դնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան։ . . . 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1.50 կոպէկ։ Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի „Դնար խօսնակից“ որի համար առանձին կարելի է ստորագրել և մնացեալ հինգը առանձին։

Հրատարակիչ Տիգրան Ց. Նազարեան։

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գլխաւոր գրասենեակի մէջ, Երևանսկայա հրապարակի վրա, ջակելու տանը բացված է ստորագրութիւն յօգուտ 'ի տէր Հանգուցեալ կայսր Ալէքսանդր II-ի ՈՐԲԱՆՈՑԻ, որ բացվելու է Թիֆլիսի մէջ։

4—15

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է
ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից։ Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկայ։

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց

Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջումն կը լինի։ Մեր հասցէն՝ Въ Эривань

А. Гуламирянцу

Дозволено цензурою, Тифлисъ. 20 Мая 1881 года.
Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.